



ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ARMENIAN RELIEF SOCIETY, INC. / CENTRAL EXECUTIVE BOARD  
NGO in Consultative Status with UN ECOSOC and in Association with the DPI

Սեպտեմբեր 30, 2014  
Մասաչուսեթս, ԱՄՆ

Հայաստանի Հանրապետության Սփիւռքի Նախարարութիւն,

Մեծարգոյ նախարար՝ Տիկին Հրանուշ Հակոբյան,

Հայ Օգնութեան Միութիւնը, իր աշխարհասփիռ միատրններուն եւ մասնաճիւղերուն անունով, կը շնորհաւորէ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան հիմնադրութեան 6ամեակին առթիւ:

2008 թուականին ծնունդ առած Հայաստանի Հանրապետութեան հիմնական մասնիկներէն մին, կը կամրջէ Հայրենիք-Սփիւռք համագործակցութիւնը, ի գործ դնելով տասնեակ ծրագիրներ՝ նպաստելու համար Հայաստան-Սփիւռք կապերու զարգացմանը:

Նախարարութեան հովանիին տակ, հայ համայնքներու կրթամշակութային, հայապահպանման ծրագրերու եւ համաժողովներու մշակումը եւ իրականացումը մեծ դերակատարութիւն ունին ներկայ մարտահրաւերներուն առաջ գտնուող հայ ժողովուրդին գոյատեւման պայքարին մէջ:

Միջին Արեւելքի եւ մասնաւորաբար Սուրիոյ ներկայ քաղաքական պայմաններուն մէջ ապրող հայորդին, հիմա, աւելի քան երբէ՛ք, կարիքը ունի հայրենիքի գուրգուրանքին եւ հոգատարութեան: Արդ, այս պատասխանատուութիւնը վստահուած է նաեւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան:

Հայոց Յեղասպանութեան 100ամեակի սեմին, ժամանակն է, իրականացնելու եւ գործի՛ դնելու մեր համադրեալ կարողականութիւնը՝ ի խնդիր մեր հայրենիքի հզօրացման եւ ապահովութեան ու մեր ժողովուրդի նիւթական ու հոգեկան բարգաւաճման:

Վարձքերնի՛դ կատար:

Յարգանօք՝

Հայ Օգնութեան Միութեան  
Կեդրոնական Վարչութիւն



2945-14  
1 10 2014